

ՄԱՂԱՔԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՕՐՄԱՆՅԱՆ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԻՆ*

(Արտասանյալ ի լսարանի Կրթասիրաց ընկերության
ի Սկյուտար ի 26 մայիսի 1879)

Ինչպես կըսեի, պատմագիրք մեզ բավական ծանոթություններ չեն տար կատարյալ զննություն մը կատարելու, և տվածնին ալ շատ երկար ուսումնասիրելո պետք ունին. այսու հանդերձ ով որ անկողմնակալ հոգվով և թափանցիկ աչոք կկարդա մեր ամենեն դժբաղդ դարուց պատմությունները, բնական իմն ազդեցությամբ ալ կնկատե, թե Հայաստան այն դարերուն մեջ ներհակընդդեմ վարչության ոճերու ալիքներու մեջ կծփար, հինը կավրվեր և նոր մը չէր հաստատեր, հայության հոգվույն բերման և զգացմանց հակառակ գործեր կկատարվեին, թագավորք ազգային արժանապատվության մոռացողք՝ օտարաց պաշտպանության մեջ կփնտռեին իրենց զորությունը. և առանց սկզբան մերթ հարևելս և մերթ հարեմուտս, մերթ ի քրիստոնյայն և մերթ հոչ քրիստոնյայն կդարձնեին իրենց ակընկալությունը. անոր համար ալ նախարարք միաբանություն պահելու անհնարության մեջ կգտնվեին, ցորչափ և ոճն կեդրոնական իշխանության ինքն իրեն հետ միաբան չէր: Նույն պատմագրաց հառաջ բերած դեպքերուն մեջ դժվար չէ տեսնալն թե երբ կեդրոնական վարչության ոճն այս կամ այն կերպով Հայաստանի մեջ հաստատել կուզվեր, այն ատեն ավելի կզորանային ներքին գժտությունք, վասն զի հայության հոգին կապստամբեր փոքձ մը դեմ, զոր բոլորովին չեմ ուզեր դատապարտել, վասն զի կրնա ըլլալ որ ժամանակին պարագայք թանձրացյալ և գործադրական առմամբ այնպիսի փորձ մը կարենան արդարացնել: Սակայն չեմ կրնար ալ լռել թե այն ոճը հայության հոգվույն հարմար չէր: Այդ հոգին, որո այժմ ո՛չ գովեստը կընեմ և ո՛չ դարովը, այդ հոգին՝ որ հույուն և հայերուն և հայության բնական է, ապստամբեցավ նաև օգտակարության լուծեն: Պակաս չեղան և չեն դեպքեր հորս կեդրոնական և կեդրոնացուցիչ հոգվո օգուտները ակներև էին և են, բայց հայությունն նաև օգուտեն հրաժարեցավ, և ի սմին կարծես թե յուր հոգվույն բնական դրդմանց հպատակեցավ: Կեդրոնական ոճույն գործածությունը ավելի կարևոր և ավելի օգտակար է դժվարին պարագայից մեջ և նեղությանց ժամանակ, որպիսիք հայոց և Հայաստանի վրայեն պակաս չեղեն. նա ինքն Հռոմ՝ հանրապետական կառավարության դադարումը կվճռեր երբ հայրենիք ի վտանգի էին, և դիկտատորին անխոտոր և կեդրոնացուցիչ իշխանության ինքզինքը կենթարկեր: Այսպիսի պարագայից մեջ կգտնվեր և Հայաստան. բայց հայությունն դժբաղդագույն ևս էր, վասնզի և ոչ իսկ յուր փրկության համար օրինավորապես խորհելու պատեհն ուներ: Կրնամ ընդունիլ թե որք Հայաստանի մեջ կեդրոնացուցիչ ոճո պաշտպան եղան, հայրենասեր նպատակ մը կրցան ունենալ. բայց կխնդրեմ որ հայոց և հայության ամբաստանողներն ալ ընդունին թե բնածին անմիաբանության հոգի մը չէր որ հայը կըմղեր, հապա արտակեդրոնական դրության

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1988 թվականի № Ը-ից:

հակամիտությունը, և սույն ոճույն բնական հարումը, որ մինչև ցվերջին կետ՝ յուր հաստատության մեջ անվրդով մնալ կնկրտեր:

Հինգ դարե ի վեր հայությունն զուրկ է քաղաքական դրութենե, և խեղճ հայն վարատական և ցրվյալ, հալածական և նեղյալ օտար երկնի տակ և օտար երկրի վրա սկսած է փնտռել հանգստյան ճաշակը: Բաղդը իրեն հետ ոխերիմ թշնամի՝ ունեցավ տակավին երբեմն-երբեմն, աստ կամ անդ մարդասեր վայրկյաններ, և Հայաստանի սահմաններեն դուրս ալ Հայկա որդիք ինքնորեն և ինքնուրույն վարչության հետքեր ունեցան. հոս ազատ քաղաք մը, հոն առանձնաշնորհյալ կյանք մը. հոս ցեղի մը ապահարկությունը, հոն գլխավորի մը արիությունը. հոս պատրիարքական իշխանությունը. հոն կայսեր մը բարեսրտությունը, թեպետ անկատար, թեպետ անհաստատ, բայց միշտ տեսակ մը հայ վարչության նշմարանք եղան: Ասոնց ամենն ալ քննեցեք, և կտեսնաք որ հայն յուր հոգվույն ազդեցությամբ մղյալ, իրեն համար այնպիսի վարչական ձևեր և մատակարարության ոճեր փնտռեց և պատրաստեց, որոց վրա նաև սմենեն թեթև ակնարկ մը, անմիջապես կհամոզե թե այն ժողովուրդը, որ այդ ճամբաներով ապրեցավ կամ կապրի, չկրնար ընդունակ ըլլալ կեդրոնական ոճույն:

Գաղտնիք մը հայտնած չեմ ըլլար, և ո՛չ ալ նոր ճշմարտություն մը խոսած, եթե ըսեմ՝ թե օսմանյան հպատակ հայոց ազգը կամ հասարակությունը, որուն հաղթական Մեհեմմետի կամքն՝ պատրիարքական անվան և ստորոնությանց ներքև՝ վարչական ձևեր և իշխանություններ շնորհեց, տարօրինակ դիպաց և աղետալի գործոց պարտական և պատասխանատու գտնված է անցյալ դարերու մեջ. բայց ե՞րբ. երբ խրստապահանջ նույնօրինակության, կեդրոնականության և մասնավոր մարմնոց և անհատից անգործունեության փորձեր փորձվեցան: Այս կերպ դեպքերուն՝ պատմությունը զանազան անուններ տվավ, զանազան պատճառներ գտավ, զանազան մեղադրանքներ հնարեց, զանազան հանցավորներ ցուցուց, և ավելի ևս հառաջելով ոմանք բովանդակ իսկ հայությունը իբր բարվո իմիք անբավական և անհարմար դատապարտեցին: Այլ եթե այս ամեն մեկնությանց տեղ հայության հոգվոյն բնիկ հատկությունը դնեք, և անոր հակառակ եղած փորձերը և գործերը որոշեք, ա՛լ պատմությունը ձեզի համար դժվարիմաց պիտի չըլլա. և հայությունն յուր թերությամբ և յուր հանցանոք հանդերձ գովելի պիտի երևնա սմենուն. և որ իմ մտացս համեմատ առավել նշանավոր է և առավել օգտակար, հայության հոգին պիտի ցուցնե յուր բարի հատկությունները, և անոնց որ հայության բարվույն կաշխատին պիտի ցուցնե՝ թե որն է նպատակին հասնելու ապահով ճամբան:

Դարեր իրարու հաջորդեցին, այլ հայությունն թաղեալ ի խորս ասիական աշխարհաց, ի մեջ նեղությանց և տառապանաց, կառաջնորդվեր միայն յուր հոգվույն բնական մղմամբ. և այն ժամանակներուն մեջ ալ գործով կցուցներ ձև մը, որո ևնունը ապագա ժամանակաց մեջ դրվեցավ բարգավաճյալն Եվրոպիո ճարտարահնար բարոգիտութենեն: Հայն ստացավ հայնժամ տեսականապես (ինչպես տրամաբանք կխոսին), ինչ որ արդեն ուներ իրականապես. վասն զի ըստ իս 1860 տարվո «Ազգային Սահմանադրությունն Հայոց» ոչ թե նորագյուտ ինչ է, կամ հայ ժողովրդյան վարչական ձևույն մեջ հիմնական փոփոխություն մը, այլ մանավանդ հայության հոգվույն պահանջը, որուն յուր ձգտմամբ և ըղձյուք կդիմեր, ինչպես նուրբ օդը կձգտի ի բարձր կամ ինչպես ծանրը կդիմե ի ստոր. և այս այնու իսկ հայտնի է որ հորդ անտի որ սահմանադրական ձևը օրինավորություն ստացավ, և յուր առաջին ժամանակաց անփորձությանը արդյունք եղող դժվարությունք վերցվեցան, կարծես թե հայության հոգին իրեն ավելի հարմար կացություն մը գտավ, և իբր թե ի բնե անմիաբանության հակամետն յուր բնածին մոլությունը մերկացավ, և ինչվան դժվարին գործոց թևակոխելու կարողություն ունեցավ. և այնպիսի գործոց՝ հորս անմիաբանությունն եթե մերժվի իսկ ինքնին կսպրդի. և այս այնչափ նախանձելի միությամբ և միաձայնությամբ կատարվեցավ, որ օտարք անգամ մեր վրա սիրանալով կրցան հայ ազգության վրա ոչ միայն բարեհույս լինել, այլ և վստահության հիմերը գտնել ի նմա:

Մեր այդպիսի հոգվույն նշանակ է ևս այն, որ երբ կեդրոնական մեր իշխանությունը գրեթե ոչինչ էր յուր հարկեցուցիչ միջոցաց անբավականության համար, և նույն իշխանությունն կեդրոնական՝ գործադրության միջոցներե իսկ զրկված էր, Հայության հոգին՝ որ մասնավոր և անհատական կարողությանց և գործունեությանց լրումն է, գիտցավ այնպիսի միջոցներ ստեղծել սույն այս մասնավոր և անհատական զորությանց ձեռոք, որ ազգս կրցավ իսկ մրցիլ ի մասին հառաջադիմության այն ազգաց հետ որք իրենց ձեռնտու ունեցան զորավոր իշխանություններ և բարձր հովանավորություններ: Միաբանությունք և ըն-

կերությունք, գսլվառ ե թաղք, ինչ որ են, ինչ որ գործեցին, ե ինչ որ կգործեն, ան-ստելի կերպով խոսքերս կհավաստեն:

Բանախոսի մը սահմանյալ ժամանակի միջոցը շատ ընդարձակ մեկնությանց մըտնալու չներեր, մանավանդ երբ լայնածավալ նյութ մը բացատրելու պարտքը ստանձնած է. այս պատճառավ ինչ որ ցարդ ակնարկեցի հայության հոգվոյն գործոց և հակմանց, կատարելության և թերության վրա, թող բավական ըլլան մեզի, անոնցմե ընդհանուր հետևություն մը քաղելու և իբր ի հայելվոջ հայտնելու անոր կերպարանը և ըսելու թե «Ահա հայության հոգին»: Այլ որովհետև այդ հոգին է որ ինքն պիտի կրթվի ե հայ ազգությունը պիտի կրթե, պետք է ես որ՝ այդ նպատակին հասնելու համար միջոցներ ցույց տրվին, և հայ սիրտերու սնոտի վախերը փարատելով, սմենուն սրտին մեջ քաջալերություն մը ազդվի՝ թե հայության հոգին ընտիր է. գոնե այնչափ ընտիր, որ ամեն կերպ հառաջադիմության և ամենեցուն ակնկալության համապատասխանելու ընդունակությունը լիովին ունի:

Այլ մինչչև այդ բացատրության սկսյալ, սակավիկ մի խոսքս ընդհատելու համար ձեր բարեհաճությունը կխնդրեմ:

Ազգի մը հոգին կատարյալ կերպով ներկայացնելու համար գիտեմ թե չբավեր ցուցնել թե նա ի բնե անմիաբանության հակամետ չէ. կամ թե բացատրել միայն թե ինչ որ ոմանց համար անմիաբանություն կերևա, ճշդիվ և արդյամբ այս կամ այն զգացման արդյունքն կամ մոլությունն է: Անոր համար ես ինքնին կխոստովանիմ թե հայության հոգին ձեզի հայտնած և իմացուցած չեմ ըլլար բանախոսությանս առաջին մասովը՝ ուր գրեթե սոսկ հիշյալ կետին վրա պնդեցի: Սակայն կարծեմ թե դուք ալ դյուրավ իմացայք թե իմ դիմացս գլխավորաբար դժվարություն մը կայր, և եթե կանխավ զայն լուծել չաշխատեի, կարծես թե ամենուն սրտին մեջ գաղտնի խղճի խայթ մը թողուցած պիտի ըլլայի, և ամեն խոսքերս հարստահարիչ երկբայության առջև պիտի ցնդեին: Ապա թե ոչ շատ դյուրին գործ է հայության հոգին բացատրել, մեջ տեղ դնելով այն գլխավոր հատկությունները որք ընտիր հոգվո վիճակյալ ազգաց հասարակ են, և քանի մը համառոտ մեկնությամբ հաստատել թե ինչպես այն ամեն հատկությունները մեր ազգին մեջ ալ կըգտնվին, և հայության հոգին կզարդարեն:

Հայության հոգին ունի բնական արթնություն մը, աշխույժ բնավորություն, մտաց սրություն, որևիցե առթի մեջ ինքզինքը չկորսնցնել, և ամենեն մեծ վտանգի մեջ կարող լինի պաղ արյամբ և լուրջ տեսությամբ ելից դարմանը գտնալ և անոր գործադրության վրա:

Հայության հոգին ունի սրտի արիություն՝ որով երբեք ինքզինքը ընկճյալ չկարծեր բաղդին բռնավորութենեն և թշնամութենեն, և թեպետև դժբաղդությունք երկնաչափ բարձրանան և ինքն անոնց ծանրության տակ հեծե, սակայն այսու իսկ իր հույսը և փույթը չկորսնցներ:

Հայության հոգին ունի աննկուն հարատևություն որով կպահպանե յուր ազգությունը և կրոնքը, լեզուն և սովորությունը, միայն յուր կամաց և մտաց ստնդրվության վստահացյալ, երբ ամեն կողմեն չըսեմ հորդորյալ՝ այլ գոդ ստիպյալ իսկ է անոնցմե բաժնվիլ:

Հայության հոգին ունի բարուց չափավորությունը որով գիտե առթից համեմատ վարվիլ, և յուր հաջողությամբ չզեղծանիլ, ինքզինքը մոռնալով բերմանց և կրից գերի և խաղալիք չըլլալ. այլ ամեն պարագայից մեջ պահպանել յուր միակերպությունը, և արտաքին և բաղդի միջոցաց գործածությունն ալ կանոնավորությամբ մը կարգադրել:

Հայության հոգին ունի այն միաբանությունը որով ազգային անհատք իրարու միանալով կրնան ընդհանուր բարին և ընդհանրության ավանդ եղող բարիքը պահպանել, պաշտպանել, հառաջացնել և կատարելագործել:

Ահա ուրեմն հայության հոգին. հայությունն ունի ուրեմն ազգության հոգին, վասն զի ունի պահանջյալ պայմանները: Մի ըսեք՝ թե ինչ որ ես կհաստատեմ թե ունի, հաճախ փորձառությամբ թերի կգտնաք, և ստեպ իսկ այնչափ թերի որ ավելի բնական կերևի հետևցնել թե չունի: Մի ըսեք, կաղաչեմ, վասն զի անիրաված կըլլաք դուք ձեր ազգին, և ձեր նախանձահուզությունը չարդարանար իրականության առջև: Ազգության հոգին, ոչ միշտ առաքինություն է մարդուն համար, այլ ստեպ իսկ շահախընդրություն. գոնե երկբայական է իմ մտացս դատաստանը երբ կտեսնեմ՝ թե ազգության հոգին համանիշ և համանուն կըլլա պաշտպանության և օգնության, փառաց և պարծանաց, շահու և անձնդյուրության: Երբ ունի ոք ազգ մը զորավոր և փառավոր, հարուստ և ազդու, ո՞հ, ի՞նչ դյուրին բան է այդ ազգության հոգին ունենալ. ինչպես դյուրին է դույզն գումար մը նպաստից և ողորմությանց նվիրել՝ երբ ոք բյուրավոր ոսկիներու տեր ըլլա: Այլ ճշմարիտ ազգասիրությունը կամ ազգության հոգին, այն ատեն ավելի առաքինական է, չըսեմ թե դյուցազնական իսկ, երբ ոք յուր ազգութե-

նեն ոչ թե պաշտպանություն՝ այլ հարստահարություն, ոչ թե օգուտ՝ այլ վնաս, ոչ թե դյուրություն՝ այլ վտանգ, ոչ թե փառք՝ այլ անարգանք հավետ յուր վրա հրավիրելու տեսակետի ներքև կգործե: Հայքս, թող ամեն աշխարհ այս պարծանքը մեզի ներե, հայքս ազգերնիս սիրեցինք և կսիրեմք, և կենդանի է Տեր, որ պիտի սիրեմք, թեպետև այդ սերը մեզի նեղությանց դուռ մի ըլլա և ոչ այլ ինչ:

Հայուն ազգասիրությունը հայտնվեցավ միշտ անցեալ դարերու մեջ անդրդվելի հավատարմությամբ մը. թեպետ բնական ընթացք իրաց այնպես կբերեին որ առանց այս ազգային հոգվույն, այսօր հայ մը իսկ մնացած ըլլալու չէր. և եթե ոք մնացած ըլլար՝ Հայության անունն իսկ բերանը առնել պետք էր որ չուզեր, առանց մեկ գերաստիճան առաքինության: Որովհետև բնավ շահու կամ դյուրության երևույթ մը չէր հորդորեր զինքը,—և եթե կներվի ինձ այսպես ինքզինքս բացատրել,—երբ ուրիշ շատ մը ազգաց ազգասիրությունը, ազգային երախտագիտություն կրնա անվանիլ, հայոց ազգասիրությունը պետք է ազգային մարտիրոսություն անվանել:

Երբ այդ սկզբան վրա հիմնեմք մեր դատաստանները, ո՜հ ինչչափ ավելի արդար և զիջող և բարեմիտ կպարտավորիմք ըլլալ մեր ազգին թերությանց ի մասին ազգասիրության, որովհետև ըսել՝ թե հայերն ազգության հոգին կատարյալ ունին, չենթադրեր ամենևին որ ըսվի ևս թե հայերն ազգության հոգվույն և ազգասիրության գործոց մեջ թերություն չունին: Այո՛ ունին, և բաղձալի է որ այդ թերությունք ալ վերնան, որով մեր ապագայն ավելի հուսալից դիրք մը ստանա. և բաց աստի՝ ա՛լ տեղի չտրվի այն շփոթից որուն մեջ շատեր կիյնան, և հայուն սեփական թերությունները և հայուն կամքեն անկախ չարությունները ի մի խառնելով, բոլոր յուր դժբաղդ դրից պատասխանատու՝ նույն ինքն հայը կենթադրեն:

Ազգայնոց և ազգասիրաց առջև կխոսիմ, կհամարձակիմ ևս ասել թե առաջի ազգագիտաց, որոց համար գաղտնիք չեն հայոց և Հայաստանի դեպքերը և անոնց շարահարությունը: Քանի՞ դար է որ ձախորդությունը կհալածե Հայկա որդիքը: Ես կարծեմ թե ճշմարտախոս ըլլալ ուզելով՝ պետք է ելլամք այն ժամանակները երբ կրակապաշտությունը քրիստոնեության, Սասանյանը Արշակունվույն, և Պարսիկը ոչ Պարսկին դեմ անողոքելի հակառակություն մը զգաց, և այս երկու կողմանց մեջ անհաշտ պատերազմներ գրգռվեցան: Հայաստան հազիվ թե ամենամեծ փոփոխության մը ենթարկված՝ հեղափոխությանց կից եղող տրկարությունը կկրեր. զորավոր դրացիք այդ երկրին տերության համար կկռվեին. և միտքեր ալ հուզման մեջ մնացած՝ տեսակտեսակ խնդիրներե և շահերե՝ իբր թե ամենի ալիքներե կկոծվեին: Այն օրեն ի վեր կրնամ ըսել թե Հայաստան աղեկ օր մը չտեսավ, և հոգի առնլո կամ կուզդուրելո վայրկյան մը չունեցավ: Արևելքեն պարսիկք, արևմուտքեն հույնք, հագարացիք հարավեն և սկյութացիք հյուսիսեն, տասնըչորս դարե ի վեր շարունակ կհարվածեն այդ տարաբաղդ ազգը և դժբաղդ երկիրը, որ հզորաց մեջ տեղը մնացած և անոնց կրից թատրոն ըլլալու դժպհի բաղդն ունեցավ: Հայն այդ կռիվներուն մեջ ոչ միշտ ուղղակի հարվածոց նպատակն էր, թեև անոնց հպատակ. հզորք իրերաց ձեռքեն կուզեին զայն թափել. և իբր երկրորդական ինչ՝ զորավոր դրացվոց բաղդին կապված էր Հայաստանի բաղդն ալ: Այդ ծովացեալ դժբաղդությանց օվկիանին մեջ, աստ և անդ սեպացյալ ժայռեր փրփրադեզ ալյաց դեմ մաքառելով հայության դրոշը կրեցին իրենց վրա, և փառոք կրեցին: Մամիկոնյանք, Բագրատունիք, Արծրունիք, Ռուբինյանք, Ուրբելյանք, Դավիթ և Մխիթար Սյունիք, և մինչև ցվերջին ժամանակս քաջարի զավակքն Ուլնիո, կրցան սպարապետությունններ, իշխանություններ, թագավորություններ, և ինքնօրենություններ հաստատել և պաշտպանել մասնավոր գավառաց մեջ կամ ապահով լերանց վրա: Ասոնք թեպետև հայության բաղդն հիմնապես չկրցան բարվոքել, սակայն մեծ արգասիք ունեցան անոր գոյության և պահպանության օգնելով, և այնպես որ անոնցմե յուրաքանչյուրն՝ թեպետև իբր ամենայն հայոց իշխանություն և ազատություն չկարենա հառաջ բերվիլ, բայց և առանձնակի առյալ իբր կանոնավոր՝ բարեկարգ՝ աշխարհաշեն և զորավոր իշխանություն մը կրնան հիշատակվիլ, գոնե գլխավորները: Իսկ ես ուրիշ նպատակ մը ունիմ այս հիշատակները հառաջ բերելուս մեջ. կուզեմ հետևցնել, որ եթե հայերը այնչափ թշվառությանց և դժվարությանց մեջ այդպիսի գործեր կատարելու և այդպիսի արդյունքներ հերևան հանելու կարող եղեն, ուրեմն կատարյալ ազգային հոգի, ճշմարիտ ազգասիրություն, և իրական միաբանասիրություն ունեցան. որովք միայն այդ գործերն կկատարվին: Ի զուր է պընդել թե ավելին կրնային ընել եթե ուզած ըլլային. կամ ինչպես շատերը կըսեն, եթե միաբանություն ունենային: Վասնզի որոնք որ այդ աստիճան հաստատություն և հաջողություն ցուցուցին, նոքին ավելի լավ դատավոր են՝ քան թե այժմյան քննիչները. և եթե կրնային՝ ո՞չ ապաքեն ըրած ալ կըլ-

լային: Մյուս կողմեն մի մոռնայք Հայաստանի վիճակը այն դարերուն մեջ, երբ հիշյալ մասնական հայ իշխանությունք հիմնեցան Մեծ և Փոքր Հայոց, և նաև անոնցմե դուրս ելող երկիրներուն զանազան կողմերը: Աչվներնուդ առջևը ըլլա սեպագրյալ ժայռին օրինակը որ համատարած օվկիանին ալիքներեն կծեծվի, կդիմանա, և չխորտակիր. միթե՞ օրեն է ըսել՝ թե ինչո՞ւ գեղեցկատեսիլ ծաղիկներով զարդարված չէ. կամ թե անոր վրա մանր ծառեր, կանանչ թուփեր, փոքրիկ արոտներ միայն տեսնալով, կրնա՞ս ըսել՝ թե ինչո՞ւ բարձրուղեշ ծառեր, գեղասաղարթ անտառներ և ընդարձակ մարգագետիններ չպարունակեր: Միթե՞ զարմանալու չեմք անոր հաստատության և մասանց իրարու հետ ամրապինդ միության վրա, որով միայն անկործան մնացած է և կմնա:

Ուստի արդարադատ քննիչը պիտի զատե այն՝ որ հայության հոգվույն պատասխանատվութենե անկախ թերություն է, ինչպես որ ես ալ կուզեմ ընել. և ցուցնելեն ետքը՝ թե ինչպես հայության հոգին ընդհանրապես առյալ այնչափ ընտիր հատկությամբք զարդարյալ է և այնչափ գովելի է որչափ և ուրիշ ազգաց հոգիք, և բացատրելեն ետքը՝ թե շատ մը թերությունք որք հայ ազգության վրա կդրվին, իրեն պատասխանատվության ներքև չեն իյնար, պետք է որ ավելի առաջ անցնիմ, և ինչ որ մեր թերություններ են անոնք ալ մեջտեղ դնեմ: Թերություն կըսեմ ոչ թե բարոյական իմաստով միայն՝ որ է հանցանք, այլ նաև բնական իմաստով՝ որ է պակասություն:

Դժվարին գործ ապաքեն, գալ և ի հրապարակի քարոզել թե հայության հոգին կամ հայ ազգությունը այս կամ այն պակասությունները ունի: Ոչ թե միայն եղբայրսիրությունն է լոկ՝ որ թերությունները ծածկել և քողարկել կհորդորե, այլ նաև անձնասիրությունը, վասն զի որով որ ընդհանրության մեղադրանք պիտի խոսիմ, նովին և զանձն իմ և զիմսն պիտի դատապարտեմ: Իրավ է որ երբեմն այսպիսի կծու պաշտոններ ալ հանձն պիտի առնուն անոնք որ ուսուցանելու և վարդապետելու և ատենաբանելու պաշտոնը վրանին կառնուն, և ես իսկ խուսափել չեմ ուզեր այդ դառն և զկծեցուցիչ պարտքեն. այլ միայն կերպարանը փոփոխելով, փոխանակ դատախազի և ամբաստանի ձև առնլու, կուզեի որ բարեկամի եղանակավ քննեմք թե ինչ ընել հարկ է մեզ ներկա պարագայից մեջ, որ հայության հոգին յուր բարձր սկզբան և ավելի բարձր նպատակին համեմատ գործելով՝ մխիթարական և օգտակար արդյունքներ հառաջ բերե:

Սերման և բողբոջի և մշակության և պտղաբերության օրինակը ինչչափ ալ շատ սովորական եղած ըլլա, նորեն կրկնելը միշտ ավելորդ չէ: Աղեկ պտուղ ընդունելու համար աղեկ սերմ ունենալ բավական չէ, աղեկ ալ մշակելու և խնամելու է, ապա թե ոչ նաև ամենեն ընտիր հունտը վտիտ և տկար, որդնոտ և վտած պտուղներ կուտա՝ եթե կարևոր խնամք եղած չէ: Հայության հոգվույն ալ երբեմն-երբեմն ընտիր պտուղներ չտալուն ասկեց զատ պատճառ փնտռելու հարկ չունիմք: Ինչչափ պատմությունը կրկտեմք ոչ թե մերինը միայն, հապա ընդհանրապես ամեն ազգաց պատմությունները, նույնչափ կհամոզվիմք եթե անկիրթ ժամանակներու մեջ ավելի վնասակար գործեր կատարվեցան, և միևնույն սզգությունն և հոգին զանազան դարուց մեջ ստացած կրթության համեմատ զանազան գործեր ալ ցուցուց, երբեմն բարի և երբեմն չար, երբեմն գովելի և երբեմն դատվելի: Ավելի զգալի եղավ այդ կետը մեր ազգին մեջ, որ՝ ոչ թե միայն առավել կամ նվազ կրթության ատենեներ ունեցավ, հապա և կերպ-կերպ կրթությանց ազդեցությունն ալ զգաց՝ Հայաստանի տյարց կրթության աստիճանին և անոնց ընկերական հոգվույն կերպին համեմատ: Անդստիս այն ժամանակեն որ մեր պատմությունը ճշմարտության վրա հիմնյալ կներկայանա մեզ, Հայաստանի տիրապետողաց փոփոխությունը զգալի կըլլա նույն իսկ հայ ազգության հոգիեն, և պատմության քննադատ իմաստասերները կարծես թե շոշափելով կզգան Պարթևական և Պարսկական, Հունական և Արաբական, Քրիստոնեական և Մահմետական իշխանությանց իրարու հաջորդելը: Հայը չկրցավ չզգալ յուր տիրապետաց հոգին. վասն զի երբ ասնք քիչ մը հինցան՝ սկսան նաև լուծին հետ հոգին ընտելացնել իրենց հպատակներուն, և հայության հոգվույն վրա իրենց սեփական թերությանց զգացմունքները պատվաստել: Բնական էր որ այդպիսի պատվաստք և նորություն հավասարապես ամեն անհատից վրա չներգործեն, և անկեց հակառակությունք ալ ծնանին. բայց ավելի չատն այն էր որ Հայաստան յուր բաղդին տարօրինակ և կույր հարվածներովն՝ և ո՛չ իսկ կատարյալ մի միայն տիրոջ ձեռք ինկավ, այլ ներհակընդդեմ զորությանց մեջ տարուբերելով՝ մեկ կեսը այս՝ և մյուս կեսը այն տերության կամ ազգի ծառայության ներքև ինկավ, և անոր ազդեցությանց ենթարկվեցավ: Այսպես կտեսնամք թե դարու մը մեջ պարսիկք և հոռոմք, մյուս դարուն մեջ հագարացիք և բյուզանդացիք, ուրիշ դարու մը մեջ ալ թաթարք և փրանկք, և հաջորդ

դարերու մեջ ևս ուրիշ ազգեր, բաժնեցին և անջատեցին՝ ոչ միայն հայոց երկիրը այլ և հայոց հոգին, և տարբեր շահերու նկատողությամբ տարբեր կարծիքներ ծնրուցին մեր մեջ: Ի՞նչ զարմանք ուրեմն եթե և ազգային միաբանությունն միանգամայն բաժնվեցավ, երբ զանազան տերություններե և զանազան ազդեցություններե զանազան կրթություններ սկսանք ստանալ:

Այսօր հայության հոգին բարգավաճելու առաջին միջոցն՝ զայն հավասարապես կրթելն է, հավասարապես կըսեմ՝ թե՛ չափուն և թե՛ կերպին նկատմամբ: Իսկ հոգին կկրթեմք նախ մանկական հասակին մեջ, երբ դեռափթիթ է և ամեն կերպ ազդեցությանց ընդունակ. բայց կկրթեմք նաև ապագա տարիներուն մեջ, երբ հայն հարբունս հասյալ է. և այն ատեն կգործածեմք լուսաբանությանց, հրատարակությանց, քարոզությանց, ժողովոց, ընկերությանց, գործառնությանց, և այլ նմանօրինակ միջոցներ. և ինչչափ ասոնք տարածվին՝ այնչափ ավելի կրթությունն յուր ազդեցությունը կտարածե և հայության հոգին ալ ույժ և համարձակություն կստանա: Իսկ մանկական հասակին կրթության, այսինքն է դաստիարակության վրա գալով, այս նյութը հոս չեմ ուզեր երկարել, ոչ թե նվազ կարևորությանը համար, հապա գլխավորաբար նյութույն ընդարձակության համար՝ որ ինքնիրեն բանախոսության մը կամ թե բազում բանախոսությանց ալ նյութ կրնա ընծայել, և հոս հարևանցի խոսիլն՝ հարգը նվազել է և ոչ թե առավելուլ: Մյուս կողմեն ալ ազգն արդեն այդ կետին նկատմամբ բավական արթնցավ, և թե՛ իշխանությունք և թե՛ ընկերությունք այդ նպատակին միայն իրենց փույթը դարձուցած կխոսին և կգրեն, կաշխատին և կհավաքեն, կծախեն և կուտան որպեսզի դաստիարակությունը բարգավաճի:

Իմ խոսիցս նպատակին մեջ մնալով այս միայն հիշատակեմ թե մեր տալու դաստիարակությունն բոլորովին ազգային պիտի ըլլա, ազգային ըստ լեզվին, ազգային ըստ նյութույն, ազգային ուսմունքն և ազգային ուսուցիչքն ալ: Որոնք որ ունկընդրացս մեջեն դաստիարակության ազնիվ զբաղման կապյալ են, կամ թե իրենց ընտանյաց և պաշտամանց առթիվ դաստիարակության խնդրույն վրա միտք հոգնեցուցած, այնպիսիք պիտի գիտնան ինձի պես, թե ինչպես կբաբախեն մանկական՝ պատանեկան և երիտասարդական սիրտեր, երբ ուսուցիչն բացատրե իրենց՝ հայազգի դյուցազին մը քաջությունը և փառքը, կամ վատաբաղդ մեր հայրենյաց թշվառ խեղճությունները: Անկեղծաբար խոսելով, իմ սիրտըս անպատմելի մխիթարություն մը կզգա, երբ մատաղերամ մանկտվո հայրենական պատմության ուրախալից կամ տրտմալից դեպքերը ավանդած ատեն կտեսնամ թե խնդությունը և տխրությունը, աշխույժը և թախիծը հետզհետե անոնց կայտառ երեսաց վրա կգծագրվին: Հավատացե՛ք ինձ, ունկնդի՛րք իմ, թե այն բնական և բնածին զգացումը մեծ հույս կուտա ինձ ապագային վրա, գրավական է ինձ այն թե բազմադարյան պանդուխտքս իսկ, որք հայրենի հիշատակները երկար ժամանակ մոռացության մեջ թողուցինք, և լեզունիս իսկ կորսընցնելու վտանգի մեջ ինկանք, հոգին չեմք կորսնցուցած: Հայության հոգին զորավոր հոգի է, սակավ իսկ կրթությամբ մեծամեծ արդյունքներ կարող է արտադրել: Հայե՛ր և հայուհինե՛ր, ծնո՛ղք և դաստիարա՞կք, եթե հուսացուցիչ է ձեր դիտակետն, ուրեմն անհերելի եք եթե հայության հոգվույն համեմատ չեք գործեր հայ մանկության նկատմամբ:

Այսու հանդերձ պետք է ևս խոստովանիլ, թե արդի հայության հոգվույն մեջ մանրազնին խուզողություններ ընելով դժվար չէ տեսնալ վիատության երակներ՝ որ կամաց-կամաց սպրդած են մեր ազգին մեջ. և շատեր ա՛լ ավելի առջև երթալով կատարելապես կհուսահատին և հայության հոգվույն վրա տխուր տապանագիր մը ալ կդնեն. Ա՛լ այդ ազգեն հույս չկա: Հայության հոգվույն տկարության նշան մի է՞ արդյոք այդ վիատության խոսքը. ոչ երբեք, սիրելիք իմ, մանավանդ թե անոր զորության նշան մի է. վասն զի նա որ այսպես կխոսի տխրություն մի կզգա իր սրտին մեջ. և գոգ բռնադատյալ կարտասանե այն ահագին խոսքերը, ինչպես զավակ մը յուր սիրեցյալ մորը մահվան անկողնույն քով, անոր վրա հոգևարքի նշանները տեսնալով, երեսը կըդարձնե և մոտ կեցողին արտասվալից աչոք և սրտառուչ հեկեկանոք կըսե. Ա՛լ յուր կենաց հույս չկա: Արդյոք այդ զավակը նվազ սեր ունի՞ յուր մորը վրա:

Ի՞նչ ըսեմք ուրեմն այդ վիատության նշաններուն և կիսահագագ բացատրություններուն վրա. իրավ է՞ արդյոք որ հայության հոգվույն վրա հույս մը դնելու չէ: Օ՛ն անդր, քա՛վ լիցի: Որ այսպեսն կխոսին կրկին ծանրության տակ ճնշյալ կզգան իրենց գաղափարները. մեկ կողմեն մեր հեք հայրենյաց սրտակոտոր վիճակը, ուր ամենայն ինչ թշվառություն կշնչե և հողբս կշարժե. մյուս կողմեն հառաջացյալ կամ հառաջադիմության ձեռք զարկած ազգերուն օրինակները, որոնք եթե հաջողության կհասնին՝ այնչափ և այնպիսի դյուրությամբք և նպաստյուք զորացյալ են, որ հայ ազգության ոչ թե ի մոտո ունենալն այլ և

ի հեռուստ ակնկալելն իսկ անհավանական կդատվի: Ինչչափ որ ես ալ այդ տեսությանց ծանրությունը զգամ,—և եթե անկեղծ խոստովանություն մըն ալ կուզեք, ինչչափ որ ես ալ պահ մը այդ վհատեցուցիչ տեսությանց ետջև՝ տխուր մտատանջությանց մատնված ըլլամ,—բայց հիմա պիտի ըսեմ թե հայության հոգին պետք է այդ տարտամությունները ի բաց փարատե. ինչ որ ալ ըլլա անցյալը, որուն վրա խոսիլն իսկ ավելորդ է, այսօր հայության հոգին յուր վրա վստահելու չափ իրավունք ունի:

Այո՛ ունի, վասն զի յուր ցարդ դիմանալը այնպիսի իմն անցյալ է, որ ապագա վտանգին վախը կփարատե: Ունի՝ վասն զի ինչչափ ալ վարատական և գաղթական, ինչչափ ալ տկար և անզոր, բայց տակավին վառ կպահե աննկուն հոգի մը: Ունի՝ վասն զի արդյան վիճակը նախկինեն տարբեր է, այսօրը երեկեն աղեկ, որով վաղիվն ալ այսօրեն ընտիր կգուշակվի: Ունի՝ վասն զի յուր իրավանց արձագանքը բարձրագույն տեղեր ելավ, և միջնազգային ատյաններու վճռով արդարացավ: Ունի՝ վասն զի քաղաքական հարկին բարձրագույն օրենքն յուր վիճակն ալ նկատեց, և անոր ալ իր պաշտպանությունը շնորհեց: Ունի՝ վասն զի ամեն տեղ հայն սթափեցավ, և եթե միտքն դժվարանա, սիրտն կշարժի գործել և հուսալ: Ունի՝ վասն զի այսօր մեզմե յուրաքանչյուրն ալ այդ ապահովությունը կզգա. և ուր հասարակաց կարծիքը կմիանա, անդ փիլիսոփայք աներկևան ճշմարտություն կհաստատեն: Վերը վհատյալ հոգիները հիշեցի, ասոնք շատ էին, այսօր քիչցան, վասն զի առիթներն իսկ քիչցան. և մեք որ իմաստասիրելով այդ հետևության հասանք՝ պարտավոր եմք ընդհանրացնել այդ համոզումը, և բանիվ և գործով աշխատիլ որ հայության հոգին ամենուրեք և ամեն սրտի մեջ զգենու նոր աշխույժ, նոր եռանդ և նոր գործունեություն:

Հայության հոգվույն մեջ ուրիշ թերություն մըն ալ կնկատեն ոմանք, այն է դյուրավ յուր ազգության անունն, լեզուն, սովորությունն և տարազն թողլով, օտարազգյաց նմանիլ, և փառք սեպել իսկ՝ երբ մեկը այնչափ կարենա յուր անձնավորությունը ծպտել և կեղծել, որ եվրոպացվո մը հետ չշփոթվի: Այդ հանցանքի, կամ թե կուզեք հանցանք ալ չըսեմ, այդ թեթև բնավորության տեր անձինք մերազնեից մեջ եղած են, և կան իսկ. սակայն անիրավ է ըսելն, եթե այդպիսյաց ըրածը հայության հոգվույն իբր կանոն մը պետք է առնուլ: Ասոնք ո՛չ ազգին ընդհանրությունը կկազմեն, և ո՛չ ալ ազգին մեծամասնության մեջ կգտնվին: Այդ ընողներեն շատերն ալ դյուրավ չքմեղանալ կգտնան, որովհետև իրենց ուսումնական կրթությունը ազգին կեդրոնին մեջ չկարենալով գտնալ, օտար աշխարհաց մեջ պարտավորվեցան փնտռել, և օտար սովորությանց ընտանեցան, իսկ ունակության զորությունն ալ ոչ ոք կրնա ուրանալ: Վարդ ժողվելու գացին, փուշն ալ մեկտեղ բերին: Իսկ անոնք որ հեռավոր աշխարհներ գաղթելով՝ ժամանակով տեղացվոց հետ խառնըվեցան և ոչնչացան, գրեթե բնական հարկի մը զոհ եղած պետք է ըսվին, և ոչ թե հոգվո տկարությամբ հանցավոր:

Գալով առջիններուն, մեր փոյթը պիտի ըլլա ճանչնալ և ծանուցանել թե այս չէ հառաջադիմության նշանը և արդյունքը, և ջանալ որ անտեղություն մը՝ որ բարեբաղդաբար քիչերու մեջ պարփակյալ է՝ չընդարձակի: Եվ եթե արմատաքի դարման մըն ալ կփնտռվի, այն ալ առաջին անգամ զուրցածներնուս հետ կնույնանա. այն է փոթալ ազգային դաստիարակությամբ սնուցանել մեր պատանյակները, և անոնց երկրորդական և բարձրագույն ուսումն ալ ազգայինի վերածելու աշխատիլ. ազգային մամուլը հարստացնել. ազգային ընտիր և օգտակար լրագրաց ձեռոք հանապազորդ ազգային ճաշակ տպավորել երիտասարդության սրտին մեջ. մեկ խոսքով ինչ որ մտաց և սրտի հագուրդ է ի մասին ուսմանց և գիտելյաց՝ ազգային պարունակին մեջ լրացուցանել, որ իրավամբ կարևորն իսկ օտար պարունակաց մեջ փնտռելու չպարտավորվին: Իրավ որ առ այժմ ուսումնական արվեստից համար համալսարաններ հաճախողներ դժվարավ պիտի կարենան հայկական համալսարան մը գըտնալ բայց միթե հնար չէ՞ որ ազգին մեծամասնությունը՝ գոնե ուսումնական անձ մը ըլլալու կարևոր եղածը՝ յուր ազգին ծոցին մեջ լիովին և կատարելապես ունենա՞:

Եթե ճշմարիտ խոսիլ ուզեմք, ազգին մեծամասնությունը և գրեթե ընդհանրությունը՝ լիովին հարյալ է այն ամեն բանի որ յուրն է, և այդ հարումն եղած է յուր փրկության ալ գլխավոր պատճառը. և հայսմ մասին աշխատություն մը պետք չէ ազգը համոզելու: Թերևս հակառակ այսր եղած բացառությանց խոսքն իսկ ընել հարկ չէր, եթե բովանդակ իմ նպատակիս հետ հարաբերություն ունեցող կետերը ամենայն ճշդությամբ մեջտեղ դնելու պարտքը չզգայի:

Ազգային կրթություն մը տալով, վհատության երկյուղը փարատելով, և օտարազգյաց նմանելու թեթևությենեն փախչելով հայության հոգին արծարծել, ահա ընելիքնիս. ասոր արդյունքն են մեկ կողմեն հայության հոգվույն բնությունը հաստատել, մյուս կողմեն սույն հոգվույն վրա դրված արատները

սրբել. մեկ կողմեն եղած ամբաստանութեանց արդարացումը տալ, մյուս կողմեն ընկալյալ պակասութեանց դարմանները հոգալ. նախաբանիս մեջ տված խոստմանս համեմատ տեսական խոսակցութիւններէ պիտի խորշեի, անա խոստմանս կատարումը, անա գործնական միջոցաց մեկնութիւնը. բայց դեռ ուրիշ ծանրակշիռ կետ մը ալ կա, այն ալ պետք է մեկնել, թեպետ ավարտելու ալ ստենը կհասնի:

Բանախոսութեանս առաջին մասին մեջ բավական բացատրեցի հայութեան հոգվոյն բնածին հատկութիւններեն մին, որ էր արտակերդրոնական դրության ունեցած հարումը և անհատական հատկության և զորության ազատ ասպարեզ պահանջելու միտումը: Որք հայության ապագային կաշխատին՝ հարկ է որ միտքերնուն առջև ունենան թե պարտավոր են հայության հոգվոյն համեմատ աշխատիլ: Շատ լավ դրութիւններ, շատ ընտիր օրենքներ, շատ օգտակար գործեր կհաստատվին կամ կկատարվին զանազան աշխարհաց և ազգաց մեջ. անտեղի է պնդելը թե ի հարկե անոնք մեր ազգին և մեր աշխարհին մեջ ալ, պետք է նույն կերպով գործադրել, և անկեց աներկբա օգուտներ սպասել: Շատ իմաստուն մեկ մը ըլլալ հարկ չէ իմանալու կամ իմացնելու համար, թե ընտիր օրենքը բացարձակ բան մը չէ, այլ հարաբերական, և ինչ որ ոմանց համար օգտակար է այլոց համար վնասակար կրնա ըլլալ: Սահմանադրական հոգվոյն վրա իսկ խոսելով, որո օգտակարությունն այժմ ազգաց մեծագույն մասեն ընկալյալ և գործադրյալ է, ո՞չ ապաքեն շատ մը իմաստուն քաղաքագետք կըսեն թե այս կամ այն ազգին հարմար չէ, օգտակար չէ. ո՞չ ապաքեն սահմանադրության հաստատվելուն և արտակերդրոնական ոճոյն համար ժողովրդյան մեջ չափավոր հառաջդիմություն և զարգացումն փնտռել սկզբունք եղած է:

Մեր ժողովրդյան հառաջադիմության ինչչափ ըլլալը չքննեմ, այլ հավետ ցուցնելեն ետքը թե անոր համար արտակերդրոնական ոճն, բնական պիտույք մի է, օրինավոր կսեպեմ հետևցնելը թե ուրեմն մեր ազգը հառաջադեմ և զարգացյալ ժողովուրդ մի է: Սակայն երկուք են զարգացումնք. մին որ բնական տաղանդոյն արդյունքն է, և այս մեր ազգին մեջ կա. իսկ մյուսն ուսումնական դաստիարակության արդյունք է, և անոր մեջ շատ պակասութիւններ ունիմք տակավին: Ասոնցմե առաջինն ալ բավական է որ մեր ազգին զարգացյալ ժողովրդոց հարմար սեպված վարչության և մատակարարության ոճը շնորհվի. և այն ամեն ազգայինք որք հայության բարվոյն հասար կաշխատին թո՛ղ սույն կանոնաց հպատակին. և եթե կուզեն որ իրենց ջանքը արդասաբեր ըլլա, թո՛ղ օտարոտի ճանբաներու չերթան, և եթե կերթան, թո՛ղ չզարմանան երբ իրենց ջանքն վայրապար և անօգուտ կմնան:

Սակայն լավ իմացվին խոսքերս, և չըլլա թե ոմանք այլ ընդ այլո իմաստ մը տան անոնց: Որպես զի ամեն սկզբունք և ամեն կանոն յուր նպատակին հասնի, պետք է հարգե ծայրահեղութենե փախչելու օրենքը, և ոչ ոք պնդե մեկ ծայրը՝ մոռնալով մյուս ծայրը. այլ գիտնա թե ինչ որ առաքինություն է՝ միջին տեղին մնալ կպարտավորի: Ծայրահեղություն մի է եթե ոք պնդե և ըսե. Որովհետև արտակերդրոնական ոճը ավելի հարմար դատված է մեր ազգին վարչության և ավելի օգտակար անոր հառաջադիմության, անոր համար անհնար է բարեխառնել զայն արտաքո կարգի տրամադրությամբ մը արտաքո կարգի գործոց մեջ, և իսպառ հերքելի են ոմանց և սակավուց գործերը՝ ևս և երբ անոնցմե հայտնի օգուտներ կտեսնվին: Բայց ծայրահեղություն է ևս թե ուրիշ մը պնդե և ըսե: Որովհետև կան առիթներ որոց մեջ մեկի կամ սակավուց գործը խորհրդապահության, գաղտնության, շուտության և պատեհության պարագայուքն անմիջական օգուտներ կարտադրե առանց երկար վիճից և քննության ժամավաճառության, պետք է ուրեմն միշտ այդ կերպով գործել, և հակառակ ճանբան խափանել, ջանալ իսկ որ ազգային ժողովրդական հոգին յուր ազդեցությունը կորսնցնե:

Տո՛ւր ինձ խումբ մը մարդիկ որ առջի կարծիքը պաշտպանե, տո՛ւր ևս խումբ մը որ երկրորդ կարծյաց ջատագովությունը ընե, և անա՛ ընդունայն վեճեր և անմիաբանության աղբյուրներ: Իրավ է որ պիտի չըսեմ թե այդ երկու խումբ մարդիկ անմիաբանության հոգի ունին. բայց ի՞նչ օգուտ անոնց հոգվոյն այս կերպ ըլլալեն կամ չըլլալեն, եթե վնասը նույն կերպով մեջտեղ կելլե: Ի՞նչ օգուտ, կհարցնեի..., բայց միտքս կուգա թե օգուտ մը ունի. և այս է թե քանի որ իրենց հոգին ըրածներուն հարմար չէ, մեծ հույս մի է որ իրաց վիճակը իմացած ատենին՝ դյուրավ պիտի թողուն իրենց պատահական սխալանքը և պիտի չպնդեն ընդունայն տարաձայնության վրա: Մանավանդ որ, ունկնդի՛րք իմ, ամենեն մեծ իմաստությունն ժամանակը ճանչնալն է, առիթները կշռել, պարագայները կշռադատել, և յուրաքանչյուր օրվան և յուրաքանչյուր վայրկենին մեջ ինչ որ պետք է զայն գոր-

ծել, և ոչ թե ինչ որ տեսականապես ընտիր է՝ անոր հետևիլ:

Կարևոր ժամանակի մը մեջ եմք. առիթներն և պարագայներն զորս մեք ստեղծեցինք, կամ որք առանց մեր կամաց իսկ մեջ տեղ ելան, ծանրակշիռ են. և մեր ձեռքն է որ անոնք ավելի իսկ ծանրակշիռ ըլլան, քան թե ինչ որ են: Դուք որ ազգին բաղդը ձեռվընդիր ունիք, իշխանավո՛րք և սրտվատվո՛րք ազգիս, դուք որ ազգին կեդրոնը կկազմեք, վարչության գլո՛ւխք և ուղղա՛մք, դուք որ սրբազան երդումամբ և օրինական պարտավորությամբ ազգին բարության և հառաջդիմության պատասխանատվությունը ստանձնած եք, ձեզ ամենեցուն կհանդգնիմ հիշեցուցանել.— թեպետև խրատտու ըլլալու իշխանությունը չունիմ, այլ կխոսիմ այնու համարձակությամբ զոր ճշմարտությունն յուր անքննելի զորությամբ կազդե ամեն խղճի և սրտի.— ձեզ ամենեցուն կըհանդգնիմ հիշեցուցանել, թե կսխալիք և մեծ հանցանք կբարդեք ձեր գլուխը, եթե կմոռնայք ի նկատի առնուլ՝ թե ինչ է ժողովրդյան միտքը և կամքը. եթե ազգային գործը ենթադրելով իբր ձեր միայն գործ՝ դուրսեն եկած լուսերուն և խրատներուն հարգ չեք ընծայեր. եթե անցնյուր գործունեության սուջև արգելքներ հարուցանելով, կարծես թե ձեր միայն գործունեությունը կուզեք փայլեցնել. եթե ուր օրինական կամ խոհեմական կամ շահեկան ընթացից հարկը կպահանջե՝ որ հպատակին և ժողովրդյան ալ բաղձանքն հարգվի, դուք ձեր իրավանց տարադեպ պաշտպանությանը հետամուտ կըլլաք:

Այլ և դուք ժողովո՛ւրդք և ժողովրդակա՛նք, դուք հայե՛ր ամեն դասե և կարգե, եթե կըբաղձայք խստապահանջ ըլլալ ձեր իշխանությանց հետ, ավելի խստապահանջ եղե՛ք ձեզի հետ: Եթե պարտք մի կա անոնց վրա, կրկին պարտք մեր վրա կծարնանան. պետք է ճանչնամք թե ո՛չ միշտ իշխանությունն կրնա յուր ընթացից և գործոց սկիզբը և միջոցը և նպատակը ակնհայտնի պարզաբանել, ո՛չ միշտ կրնա յուր ջատագովությունն իսկ կատարելապես խոսիլ, ո՛չ միշտ կրնա յուր զգուշավորությանց կետերը ստորասաբար հաստատել. ստեպ հասարակաց վստահությունն է որ իրեն զեն և զորավիգն կըլլա ի գործ, և պաշտպան գործեն ետքը: Երբոր դժվարին են ժամանակք, օգտակար է իշխանության չորս կողմը ամփոփելով, մի և միացյալ միություն մը կազմել, և անով ամեն կերպ դժվարությանց դեմ մաքառիլ: Բավական վստահության հիմ մըն է, որ նա՝ որ ազգին բաղդին վրա կհոգնի ժողովրդական քվեեն ընդունած է յուր պաշտոնն, և ժողովրդական քվեեն կվայելե վստահության հարատևելը: Զափազանց պահանջողությունն թեպետ և չար հոգի մը չէ, բայց բարի հոգվո զեղծումն ալ վնասակար է, և մեք մեր նախնյաց թշվառութենեն ուսյալ խրատվիմք և զգաստանամք: Անոնց հոգին պաշտպանեցի իրավ, բայց միթե հնա՞ր է սխալանքն ալ պաշտպանել:

Դուք հայե՛ր և հայուհինե՛ր, դուք որ ի բնե անհատական ձրից և կատարելության պարծանքը ունիք, և անհատական գործունեության համբավով կփառավորվիք, ահա՛ և ձեր յուրաքանչյուրին առջև ընդարձակ ասպարեզ մը: Այդ գործը որ ամենուս հավասարապես սիրելի, և ամենուս ներքին զգացմանց դիտակետն է, այդ գործը որ հայության հոգվույն վախճանն է, հայության հոգվույն ոճովն պիտի կատարվի: Անշարժ միտք չգտնվին, անզգա սիրտք չըտեսնվին, անգործ ձեռք չմնան. ամենայն ոք մտածե, ամենայն ոք փութա, ամենայն ոք գործե. յուրաքանչյուրիս յուր կարողության համեմատը կատարե, և եթե հնար է կարողութենե ավելին ալ, վասն զի պետքը միջոցներեն մեծագույն է տակավին: Երկուքնիս երեքնիս միանալով կարողությունքնիս շատցնեմք, այդ խըմբակներով ընկերություններ կազմեմք, այդ ընկերություններով հասարակությունք հառաջանան, այդ հասարակությամբք ազգը միանա և զորանա: Մեր հոգվույն համեմատ կբաղձանք որ ամենքիս ալ սեփական գործ մը ունենամք, և ամեն գործույն համար ըսվի թե՝ Այս ալ այս անուն անձին գործն է: Ի՞նչ ընեմք: Այդ ալ հայության հոգվույն մեկ հատկությունն է, եթե կուզեք ըսեմ ևս՝ թե մեկ տկարությունն է: Բայց այդ տկարության ալ աղեկ կողմը կա. և յուրաքանչյուր ոք թող աշխատի որ ինքն ալ սղեկ բան մը ըրած համարվի: Երբ գործողք կշատնան, արդյունք ալ կշատնան, օգուտներ ալ. միթե ազգին վնասակա՞ր է այդ:

Բայց կրնա վնասակար ըլլալ՝ եթե այդ բաժանյալ գործք միության կետ մը չունենան, եթե այդ շառավիղք կեդրոնի հետ միացած չըլլան, և դարձյալ՝ երբ այդ մասնական գործք զիրար կործանելու աշխատին, կամ իրերաց գործունեության ասպարեզը խափանեն: Եթե երբեք այսպիսի ինչ ընե ոք՝ նա չարաչար կմեղանչե հայության հոգվույն դեմ, և նորա անունը հայության դպրութենեն իսկ ջնջվելու է. այլ երբ ընդհակառակն սուրբ նախանձով մը մին քան զմյուսն հառաջանալու կաշխատի. ինչո՞ւ վնասակար ըլլա բաժանաբար գործելը: Կան բաներ որ անբաժին են, և անոնց մեջ միակություն հաստատելու է, ինչպես հնար չէ երկու կեդրոն հաստատել մեկ շրջանա-

կին մեջ: Այս առթեն դուրս թո՛ղ զանազան մասունք մնան. թո՛ղ զանազանության կետեր իսկ մնան. մասանց իրարու խառնիլը և ձուլիլը չէ փնտռվածը, այլ մասանց իրարու կցիլը: Մանավանդ թե հայության հոգվույն ազդեցության համեմատ այդ է միայն ապահով ուղին՝ որով մեք կրնամք հուսալ թե մեր նպատակին պիտի հասնիմք: Ասոր համար ես երբեք չեմ մտածեր թե ինչո՛ւ ընկերությունք մեր մեջ կշատնան, և թե ինչո՛ւ նորոգյալ և նորածնունդ ընկերությունք օր քան զոր կհաճախեն. մտածելու տեղ կըլլար եթե այդ ընկերությունք սկսեին իրարու գործը խափանել կամ իրարու գործունեության ասպարեզը գրավել. բայց ցորչափ մեկը Վասպուրականին մեջը կաշխատի, մյուսը ի Տուրուբերան, մեկը ի Կիլիկիա, մյուսը ի Փոքր Հայս, մեկը մեկալին նպաստից չվնասեր, և հանգանակությանց արգելք չդներ, կուրախանամ իսկ որ գործողք կշատնան այդ ընդարձակ դաշտին մեջ, ուր բազմաթիվ մշակաց պետքը ամեն օր ավելի զգալի կըլլա: Ըստ այսմ ամեն հայ սիրտ պետք է խնդությամբ ողջունե այդ ազգասեր թաղին մեջ ծնունդ առած նորություն մը, հայուհյաց ազգանվեր ընկերությունը, որ ազգասեր և ազգանվեր տիկնայց և օրիորդաց ձեռնտվությունը և գործունեությունը և նպաստը կբերե ազգային հառաջադիմության գործույն, և այնպիսի ձևով և զգացմամբ՝ որք հայության գեղեցիկ հոգվույն արտահայտությունն են: Ձեր գեղեցիկ հոգվույն առջև, ազգանվեր տիկնա՛յք և օրիո՛րդք, պետք է որ ամեն ազգասեր յուր զարմացման հարկը վճարե, և անկեղծությամբ կըսեմ՝ թե առանց սրտաշարժ զգացմանց չկրցա ընթեռնուլ հայնկույս Վոսփորի ձեր փափուկ և համեստսփայլ ըղձից բացատրությունները, որոց ձեր խմբեն մին ի ձեր անուն թարգման ըլլալ հանձնառու եղած էր: Իցե՞ թե ձեր ազնիվ օրինակը ամեն թաղի և ամեն քաղաքի հայուհյաց մեջ տարածվեր:

Իսկ ընկերությանց գործույն գալով,—որովհետև ամեն բանի մեջ չափ և կանոն կարևոր է,—անոնց շատնալուն մեջ ալ օգտակար կըլլա հոգալ, որ բազմացնելու փափաքը մանր և աննշանակ էակաց ստեղծման չծառայե. և մյուս կողմեն լռելյայն կամ հայտնի միաբանություն մը զանազան ընկերությանց գործերը բարեկարգե: Ուրիշ աշխարհաց մեջ սովորություն է զանազան ընկերությանց կեդրոնական համայնախումբ մը ունենալ, ամենուն գործը հարմար կերպով բաշխելու: Հնար չէ՞ արդյոք նույնը մեր մեջն ալ գործադրել: Ազգային ընկերությանց գործադիր ժողովոց մտադրությունը կհրավիրեմ այս կետին վրա, մանավանդ որ կերպը բոլորովին հարմար է հայության հոգվույն:

Կրցա՞ արդյոք, ունկնդիրք իմ, նպատակիս հասնիլ և հայության հոգին ինչպես որ պետք է ձեր առջև ներկայացնել: Գիտեմ թե շատ բաներ ալ ես կրնայի զրուցել, մանավանդ թե զրուցածներս ալ մարթ էր ավելի պարզ և կարգադրյալ կերպով բացատրել. սակայն վերադասեցի որ խոսքերս զեղման սրտի արձագանք մը ըլլան, քան թե արվեստակյալ ճարտարախոսության օրինակ մը: Երբոր բովանդակ իսկ աշխարհ իբրև կաթսա հեռանդյան կպըղպըջակե, երբոր ազգք և ազգինք իրենց ապագային խորհրդովն կտոչորին, երբոր ամեն կողմեն հուսո և ակնկալության ձայներ կլսվին, երբոր մեր ազգն ալ այդ բարեգուշակ շարժման մասնակցելու կսկսի, ծանր էր ինձ տեսնել որ չարագուշակ մարգարեներ մտացածին կարծիքներով և ենթադրություններով ազգասիրաց եռանդը կմարեն և աշխատողաց ձեռվները կթուլցնեն: Ամենեն ծանր էր հայության հոգվույն վրա դրված արատը, անմիաբանության տգեղ կնքով անոր ճակատը պղծելը, և այս պակասութենեն առաջ եկած ուրիշ հիմնական թերությունները ենթադրել, որով անհնար կըլլար բոլորովին հայ ազգութենեն բարի ապագա մը սպասել. ծանր էր ինձ կըսեմ լսել այս ամեն եղերական ձայները, ուստի անոնց հակառակ խոսիլ ուզեցի, որպեսզի ցուցնեմ թե որն է բուն իսկությունը, ո՞րն է պատահական պակասությունը. ի՞նչ է անոնց պատճառը, և ի՞նչ դարձյալ գործածվելու դարմանը: Ինչ որ ցարդ խոսեցա բավական ըլլա. ուրիշներու կթողում ավելի խոհական և ավելի կատարյալ գործը:

Երբոր Հայաստանի տարաբաղդ վիճակը կքննեմ, երբոր իր վրա տիրող ազդեցությանց ներգործությունը կչափեմ, երբոր եղկելի հայոց գտնված վիճակին շփոթությունները կտեսնեմ, երբոր մեր հայրենյաց կատարյալ կործանմանե հրաշալի ազատությունը կնկատեմ, և միանգամայն կլսեմ որ ոմանք զարմացմամբ առջև կդնեն հայոց միաբանության և արիության մասին ըրած պակասությունները, և դպրովանաց և դատապարտության խոսքեր կավելցնեն այն խեղճերուն դեմ, անկեղծաբար ըսեմ, ես կզարմանամ հավետ թե ինչպես կրցեր են այնչափ միաբանության և արիության գործեր կատարել՝ որչափ ինչ պատմությունք և հիշատակք մեզ հասուցած են, և թե ինչպես կրցած են պահել իրենց ազգության արդյան վիճակը, այն վիճակը՝ որ ոմանց աչքին այդչափ հետնյալ և ոչինչ կտեսնվի:

Այդ ամենայն միության և հաստատության արդյունք է, սիրելիք իմ, այն միության որով համազգիք եղբարք են իրերաց, եղբարք ի Հայկ և հԱրամ, եղբարք ի Գրիգորյանս և ի Ներսիսյանս: Այդ եղբայրության հոգին խորարմատ տպավորյալ ունի հայն յուր սրտին մեջ, և նույն կհնչե յուր շրթանց վրա, վասն զի հավելվածոյ սրտի խոսի բերան: Մինչ ուրիշ ազգերու մեջ՝ ընկեր առ ընկեր տիրոջ անուն կընծայե, հայաստանցին կսիրե յուր համազգին եղբայր անվանել: Շատ ավելի անուշ և քնքուշ է ազգասիրաց ականջներուն Հայաստանի ռամկին ԱԽՊԱՐը, քան թե թրքախոս կամ պարսկախոս կամ գաղղիախոս հնչմամբ՝ համազգի առ համազգի տիրական անվանակոչում տալը: Մեր ըրածը չէ հայության հոգվույն հավատարիմ թարգմանը, այլ անոնց սովորությունը՝ որք հայրենական հողույն վրա ծնած և սնած, և տուռապանաց բեռամբ իսկ ճնշյալ, հայրենական նշխարաց հավատարիմ պահապան՝ և հայրենական ավանդությանց ավանդապահ են մնացած: Այդ ավանդությունն է թարգման հայության հոգվույն հոր կպարծիմք, և որով պետք է որ վարվիմք ամենքնիս, ոչ թե շրթամբ այլ և գործով եղբայր անունը տալով իրերաց, վասն զի

Ընդ աստեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի ԵՂԲԱՅՐ անուն:

Խորհրդավոր հիշատակ մը ի դեպ կու գա, եղբարք իմ, որ հայության հոգվույն և ազգային եղբայրակցության հիշատակը փառավորեմք: Հեռանդն լրացավ Ազգային Սահմանադրության հենտասներորդ տարեդարձը, և վաղիվ կպատրաստին ազգայինք տոնախմբել զայն ազգային շրջափակի մեջ. այն Սահմանադրությունը, որ հայության հոգվույն հետևությունն է, և որով հայության հոգին յուր օրինավոր բացատրությունը ստացավ: Տոնեցեք զայն և տոնախըմբեցեք, եղբայր իմ, վասն զի այնու հայության հոգին կտոնախմբեք. այլ միայն հուշ լիցի ձեզ, թե սահմանադրություն սահման կդնե, և ամենայն ինչ որ բարի է և օգտակար, դրված սահմանաց մեջ պիտի շարժի: Բարի է հայության հոգին, այլ երբ վերոհիշատակյալ սահմանաց կանոններովն գործե: